ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«11» օգոստոսի 2020 թվականի N 37

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Գրիգորյան Հակոբ
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Սահակյան Երեմ
Վարդանյան Նորայր
Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2020 թվականի N 38-Ն

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամուտների վարչական մասի՝

ա. 7422 «Վարչական գանձումներ»-ի «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» հոդվածի «6126.2» թիվը փոխարինել «8520.2» թվով,

բ. 7331 «Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից»-ի «Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ» հոդվածի «52183.8» թիվը փոխարինել «0» թվով,

գ. 7331 «Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից»-ի «Պետական բյուջեից տրամադրվող այլ դրամաշնորհներ» հոդվածին հատկացնել 52183.8 հազ. դրամ,

2) Համայնքի բյուջեի եկամուտների ֆոնդային մասի՝

ա. 8411 «Հողի իրացումից մուտքեր» հոդվածի «90588.162» թիվը փոխարինել «106146.162» թվով,

3) Համայնքի բյուջեի ծախսերի վարչական մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. 0161 «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» - ի՝

աա. 4313 «Այլ հիմնական միջոցներ» սինթետիկ հաշվի «440,0» թիվը փոխարինել «0» թվով,

աբ. 4269 «Հատուկ նպատակային այլ նյութեր» սինթետիկ հաշվին հատկացնել 440.0 հազ. դրամ,

ագ. 4266 «Առողջապահական և լաբորատոր նյութեր» սինթետիկ հաշվի «234,0» թիվը փոխարինել «468,0» թվով,

ադ. 4267 «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» սինթետիկ հաշվի «940,0» թիվը փոխարինել «1880,0» թվով,

աե. 4232 «Համակարգչային ծառայություններ» սինթետիկ հաշվին հատկացնել 220,0 հազ. դրամ,

բ. 08-4-2 «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ»- ի 4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» սինթետիկ հաշվի «1500,0» թիվը փոխարինել «2500,0» թվով,

4)Համայնքի բյուջեի ծախսերի ֆոնդային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա.0451 «Ճանապարհային տրանսպորտ» - ի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» սինթետիկ հաշվի «65767.062» թիվը փոխարինել «81315.062» թվով:

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Գրիգորյան Հակոբ

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2020 թվականի N 39

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ) ՀԱՏՎԱԾԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ. 20 շենքի 16 բն. բնակիչ ***Նելլի Նորայրի Օհանյանի*** 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 2886-16 և Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 12 փող. 4-րդ փակուղի թիվ 4 տան բնակիչ ***Գոռ Գևորգի Ստեփանյանի*** 2020 թվականի օգոստոսի 05-ի թիվ 2892-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Նելլի Նորայրի Օհանյանին:***
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 100.0 հազ. դրամ հատկացնել ***Գոռ Գևորգի Ստեփանյանին:***
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Գրիգորյան Հակոբ

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքիմարզի Չարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ.հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» օգոստոսի 2020թվականի N 40

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Գասպարյան Մելիք

Գրիգորյան Հակոբ

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Սահակյան Երեմ

Վարդանյան Նորայր

Փանոսյան Արթուր

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2020 թվականի օգոստոսի 11-ի N40 որոշման

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ

հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը),	Մակերեսը հա	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ բսահմանափակում-ների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Հողամասի տրամադրման եղանակները	մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Չարենցավան համայնք, գ.. Արզական Չարենցավանի Խճուղի 1/2 07-015-0153-0075	0.12011	Արդյունաբերության, Ընդերք օգտ. և այլ արտադրական	Գյուղատնտեսական արտադրական	չկա	-	Աճուրդ	3 532000 դրամ
2	Չարենցավան համայնք ք. .Չարենցավան Չարենցի փող թիվ 21 07-007-0057-0025	0.0385	Բնակավայրերի այլ հողեր	Այլ հողեր	չկա	-	աճուրդ	1132000